

MEMBERS OF THE BOARD

DR. RICHARD A. VLADOVIC, PRESIDENT
MÓNICA GARCÍA
JACKIE GOLDBERG
KELLY GONEZ
DR. GEORGE J. MCKENNA III
NICK MELVOIN
SCOTT M. SCHMERELSON



LOS ANGELES UNIFIED SCHOOL DISTRICT
ADMINISTRATIVE OFFICES
333 South Beaudry Avenue, 25th Floor
Los Angeles, California 90017
Telephone: (213) 241-4822 | Fax: (213) 241-8977

AUSTIN BEUTNER
Superintendent

ALISON YOSHIMOTO TOWER
Chief Academic Officer

SOPHIA MENDOZA
Director, Instructional Technology Initiative

ԾՆՈՂՆԵՐԻ ԵՎ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Փոխարինարար վերցված համակարգչային սարքերի (պլանշետներ, դյուրակիր համակարգիչներ) և աշակերտներին տրամադրված առնչվող լրացուցիչ պարագաների օգտագործման կանոններ

Աշակերտի ազգանունը (ԳՐԵԼ ՏՊԱՏԱՌ) Աշակերտի անունը (ՏՊԱՏԱՌ) Դասարանը Աշակերտի նույնացմ. Համարը Ամսաթիվ

Ծնողի/խնամակալի ազգանունը (ԳՐԵԼ ՏՊԱՏԱՌԵՐՈՎ) Ծնողի/խնամակալի անունը (ԳՐԵԼ ՏՊԱՏԱՌԵՐՈՎ)

Ինձ տրամադրվում է Լոս Անջելեսի Միասնական Դպրոցական Շրջանի (ԼԱՄԴՇ) համակարգչային Սարք և առնչվող լրացուցիչ պարագաներ: Ես համաձայնվում եմ դա պահել անվտանգ և խնամքով: Ես կհետևեմ Սարքի խնամքի ցուցումներին, ինչպես դրանք բացատրված են ստորև:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

1. Ես միշտ կիմանամ, թե ինձ հատկացված Սարքը որտեղ է գտնվում:
2. Ես երբեք ինձ հատկացված Սարքը չեմ թողնի առանց ուշադրության:
3. Ես կպահպանեմ ինձ հատկացված Սարքը՝ ֆիզկուլտուրայի դասին մասնակցելիս դա դնելով իմ կողպվող պահարանում կամ այլ անվտանգ տեղում, եթե ուսուցիչը չի հանձնարարել Սարքը բերել ֆիզկուլտուրային դասին:
4. Ինձ հատկացված Սարքը ես երբեք փոխարինարար չեմ տա ուրիշին:
5. Ես գիտակցում եմ, որ հատկացված սարքի վրա տեղադրված են անվտանգության սարքեր, որոնք թույլ են տալիս հետևել Սարքի օգտագործմանը:
6. Ես միշտ ինքս ինձ կպահեմ անվտանգ և կօգտագործեմ Սարքը միայն այն վայրերում, որտեղ կարող եմ ինձ և Սարքը պահել անվտանգ:

(Աշակերտը և ծնողը այստեղ դնում են իրենց անվան սկզբնատառերը) _____

ԽՆԱՄՔ

7. Ես հասկանում եմ, որ հատկացված սարքը կարող է ներառել պաշտպանիչ կազմ (շապիկ), որը պետք է միշտ մնա Սարքի վրա: Այդ կազմը չպետք է հանել կամ փոխարինել ուրիշով:
8. Ես էկրանը կպաշտպանեմ խազվածքներից:
9. Ես ուտելիքը և ըմպելիքները հեռու կպահեմ ինձ հատկացված Սարքից, քանի որ դրանք կարող են վնաս հասցնել Սարքին:
10. Ես նշումներ չեմ անի, չեմ նկարի, չեմ գրի կամ չհաստատված կաշուն թերթիկներ չեմ փակցնի Սարքի կամ կազմի վրա:
11. Ես չեմ քանդի կամ չեմ փորձի վերանորոգել ինձ հատկացված Սարքի որևէ մասը (սա չեղյալ կդարձնի Սարքի երաշխիքային ժամկետը):
12. Եթե վնասվածքներ տեղ ունենան, այդ թվում, բայց ոչ միայն, խազվածքներ, ճաքեր կամ փոս ընկած տեղեր, ես վնասվածքի մասին կհայտնեմ դպրոցի ղեկավարությանը (ադմինիստրացիային) 24 ժամվա ընթացքում կամ դրանից հետո հնարավորինս շուտ:
13. Գողության կամ վանդալիզմի դեպքում ես կդիմեմ ոստիկանությանը և կտեղեկացնեմ դպրոցի ղեկավարությանը (ադմինիստրացիային) 24 ժամվա ընթացքում կամ դրանից հետո հնարավորինս շուտ:

(Աշակերտը և ծնողը այստեղ դնում են իրենց անվան սկզբնատառերը) _____

ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

14. ԼԱՄԴՇ-ի համակարգիչները և ցանցային համակարգերը օգտագործելիս ես կհետևեմ ԼԱՄԴՇ-ի «Պատասխանատու և ընդունելի օգտագործման քաղաքականությանը» («ՊԵՎԸՕՔ»/RAUP):
15. Ես չեմ վերաձևաչափի (reformat) Սարքը, չեմ միջամտի անվտանգության կայանքներին (settings) կամ չեմ փոխի օպերացիոն համակարգը (օր., iOS-ը Apple սարքերի համար):
16. Ես կկատարեմ բոլոր կիրառելի հեղինակային իրավունքների և ծրագրակազմի ապահովման լիցենզիաների համաձայնագրերի պահանջները, որոնք արգելում են ներբեռնել այնպիսի միջոցներ (media) և ծրագրակազմ, որոնք ձեռք չեն բերվել օրինական ճանապարհով:
17. Ես չեմ զբաղվի ցանկացած հալածանքներով կամ ահաբեկման գործողություններով (կիրեռալիս ծանցանքներ)՝ փորձելով վնասել այլ մարդկանց՝ օգտագործելով ինձ հատկացված Սարքը կամ ցանկացած այլ էլեկտրոնային սարք:

(Աշակերտը և ծնողը այստեղ դնում են իրենց անվան սկզբնատառերը) _____

ՊԱՏԱՄԵՆԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

18. Ես հասկանում եմ, որ ինձ հատկացված Սարքը ենթակա է ստուգման՝ աշխատակազմի ցանկացած անդամի, ուսուցչի կամ վարիչի կողմից, դպրոցում, ցանկացած ժամանակ և առանց նախապես տեղեկացնելու: Ես նաև հասկանում եմ, որ Սարքը մնում է ԼԱՄԴՇ-ի սեփականությունը:
19. Ես համաձայնվում եմ ԼԱՄԴՇ-ի պահանջով անմիջապես վերադարձնել Սարքը, առնչվող պարագաները և Սարքի կազմը աշխատանքային լավ (սարքին) վիճակում (բացի սովորական մաշվածությունից):
20. Ես ինձ հատկացված Սարքը կվերադարձնեմ իմ դպրոցի վարիչին (կամ նրա կողմից նշանակված անձին) յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում: Եթե ես ցանկացած պատճառով հեռանամ կամ հեռացվեմ կամ դպրոցից, ես հեռանալու օրը Սարքը և պարագաները կվերադարձնեմ դպրոցի վարիչին:
21. Ես ավարտել եմ «Թվային քաղաքացիության» դասերը:

(Աշակերտը և ծնողը այստեղ դնում են իրենց անվան սկզբնատառերը) _____

ՄՆԱԿԵՐՏՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԱՐՔԱՐ ՏՐԱՄԱՂՊՎԱԾ ՍԱՐՔՎՈՐՈՒՄԸ

(Սարքերը տարվում են տուն)

Պատասխանատվություն աշակերտներին փոխարինաբար հատկացված համակարգչային սարքերի համար

Սույնով ձեզ տեղեկացնում ենք ձեր իրավական պատասխանատվության մասին՝ կապված ստորև նկարագրված Սարքի և դրան առնչվող պարագաների համար, որոնց թվում կարող են լինել կազմը, ստեղծաշարի մալուխը (կարբել) և մարտկոցի լիցքավորիչը («Փոխարինաբար Տրամադրված Սարքավորումներ»), որոնք Լուս Անջելեսի Միասնական Դպրոցական Շրջանը («ԼԱՄԴՇ») փոխարինաբար տրամադրում է ձեր երեխային:

ԼԱՄԴՇ-ը կարող է ծնողին կամ խնամակալին ենթարկել իրավական պատասխանատվության, եթե երեխան միտումնավոր կերպով կտրում, փչացնում կամ այլ կերպ վնաս է հասցնում ԼԱՄԴՇ-ի ցանկացած գույքին, կամ չի վերադարձնում ԼԱՄԴՇ-ի ցանկացած գույք ԼԱՄԴՇ-ի պահանջով: (Տես Շրջանի Տեղեկագիր BUL-5509.2, Վնասահատուցման ընթացակարգեր դպրոցի գույքը կորցնելու կամ դրան վնաս հասցնելու համար, թվագրված 2017 թ. հուլիսի 21, «Կալիֆոռնիայի Կրթական օրենսգրքի» §48904): ԼԱՄԴՇ-ի գույքը ներառում է Փոխարինաբար Տրամադրված Սարքավորումները, որոնք կարող են ունենալ մինչև \$700-ի արժեք պլանշետների (tablets) կամ \$1300-ի արժեք դյուրակիր համակարգիչների համար:

- Ես համաձայնվում եմ «Աշակերտներին Փոխարինաբար Տրամադրված Սարքավորումների (օրինակ, պլանշետների կամ դյուրակիր համակարգիչների օգտագործման կանոններ»-ում («Կանոններ») թվարկված **Անվտանգության, Խնամքի, Օգտագործման և Պատասխանատվության** նախորդ էջում բերված պայմաններին: Իմ երեխայի կողմից Կանոնները չընդունելը և դրանց չհետևելը, ինչը հանգեցնում է Սարքի կորստին կամ դրան հասցված վնասին, կարող է համարվել միտումնավոր կերպով կատարված արարք, որի համար ես կրում եմ իրավական պատասխանատվություն՝ համաձայն Տեղեկագիր BUL-5509-ում նկարագրված համապատասխան գործընթացային ընթացակարգերի.
 - o ԼԱՄԴՇ-ը պետք է ծնողին կամ խնամակալին անմիջապես գրավոր կերպով տեղեկացնի ցանկացած ենթադրյալ կորստից հետո, որը պարտավորություն է առաջացնում «Կրթական օրենսգրքի» Բաժին 48904-ով:
 - o Մտողը կամ խնամակալը կարող է ներկայացնել տեղեկություններ աշակերտի անունից, դպրոցում տեղի ունեցող խորհրդածոցովի ընթացքում, այն պատճառների մասին, թե ինչու չպետք է պարտադրվի վճար:
 - o Դպրոցի տնօրենը կամ նրա կողմից նշանակված անձը պետք է, այդ ժողովի ընթացքում ներկայացված ցանկացած տեղեկություններ ուսումնասիրելուց հետո, որոշի, թե արդյոք չ պետք է պահել աշակերտի գնահատականները, վկայականը կամ առաջադիմության թերթիկը և պե տք է արդյոք պարտադրել վճար՝ հասցված վնասների դիմաց: Ընդունված որոշման մասին ծնողը/խնամակալը և աշակերտը պետք է տեղեկացվեն գրավոր կերպով: Դպրոցի տնօրենի որոշումը վերջնական է, և դպրոցի մակարդակից դուրս բողոքարկում չի նախատեսվում:
 - o Դպրոցի որոշման մասին ծանուցումը ստանալուց հետո ծնողը կամ խնամակալը կարող է անհրաժեշտության դեպքում վճարել չմարված պարտավորությունը, կամ աշակերտը կարող է կատարել դպրոցի որոշած կամավորական աշխատանքային հանձնարարությունը:
- Փոխարինաբար Տրամադրված Սարքավորումները Լուս Անջելեսի Միասնական Դպրոցական Շրջանի սեփականություն են և կմնան ԼԱՄԴՇ-ի սեփականությունը՝ բացառապես այն աշակերտի կողմից օգտագործվելու նախատեսված նպատակով, որին դրանք հատկացվել են:
- Ես նաև համաձայնվում եմ ընդունել ԼԱՄԴՇ-ի «Պատասխանատու և ընդունելի օգտագործման քաղաքականությունը» և հետևել դրան՝ համակարգչային սարքավորումների և ԼԱՄԴՇ-ի համակարգչային ցանցի օգտագործման համար (տես՝ կից):

ԸՆՏՐԵՔ ՍՏՈՐԵՎ ԲԵՐՎԱԾ 1-ԻՆ ԿԱՄ 2-ՐԴ ՏԱՐԲԵՐԱԿԸ՝ ՆՇՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՎԱՆԴԱԿՈՒՄ

1-ԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ – «ՀԱՄԱՁԱՅՆՎԵԼ» ՍԱՐՔԸ ՏՈՒՆ ՏԱՆԵԼՈՒՆ – Այո, ես ցանկանում եմ, որ երեխաս սարքը բերի տուն

Ես կարդացել և հասկանում եմ վերը նկարագրված պատասխանատվությունները և համաձայնվում եմ հետևել «Կանոններ»-ին: Ես իմ երեխայի համար տալիս եմ Սարքը տուն բերելու թույլտվություն: Ես համաձայնվում եմ հետևել երեխայիս և զբաղվել երեխայիս հետ՝ դպրոցից դուրս Սարքը օգտագործելով առցանց բովանդակություն մուտք գործելիս:

Ինտերնետի օգտագործման ռիսկերի ընդունում: Ես հասկանում եմ, որ առկա են անվտանգության և գաղտնիության ռիսկեր՝ կապված ինտերնետի և անլար հաղորդակցությունների օգտագործման հետ: Ես հասկանում եմ, որ Շրջանը ձեռնարկել է առաջադիմ միջոցառումներ, այդ թվում՝ ինտերնետի գոման (ֆիլտրման) լուծում՝ նվազեցնելու այդ ռիսկերը և պաշտպանելու մեր աշակերտներին: Ես հասկանում եմ, որ ներկայումս առկա ոչ մի գոտիչ (ֆիլտր) կամ այլ տեխնոլոգիա չի ապահովում լիակատար պահպանություն նման ռիսկերից: Ես որոշել եմ, որ իմ երեխայի համար առցանց աշխատանքի և անլար հաղորդակցությունների օգուտները գերակշռում են ռիսկերը, և ես երեխայիս անունից կընդունեմ ինտերնետի օգտագործման հետ կապված ռիսկերը: Ես համաձայնվում եմ, որ իմ պատասխանատվությունն է՝ հետևել սարքի օգտագործմանը և զբաղվել երեխայիս հետ՝ վերահսկելու ինտերնետի պատշաճ օգտագործումը:

2-ՐԴ ՏԱՐԲԵՐԱԿ – «ՉՀԱՄԱՁԱՅՆՎԵԼ» ՍԱՐՔԸ ՏՈՒՆ ՏԱՆԵԼՈՒՆ – Ոչ, ես ՉԵՄ ցանկանում, որ երեխաս սարքը բերի տուն

Ես կարդացել և հասկանում եմ վերը նկարագրված պատասխանատվությունները և չեմ ցանկանում, որ երեխաս Սարքը բերի տուն: Ես նաև հասկանում եմ, որ եթե Սարքի կարիքը լինի՝ առաջադրանքները դպրոցից դուրս կատարելու համար, ապա դպրոցը իմ երեխային կտրամադրի թղթային նյութեր՝ տուն տանելու համար, և (կամ) թույլ կտա Սարքերը օգտագործել կամպուսում՝ կանոնավոր դասաժամերից դուրս:

Տպատառերով գրել աշակերտի անունը (ազգանուն, անուն) _____

Աշակերտի ստորագրությունը _____ Ամսաթիվ _____

Տպատառերով գրել ծնողի/խնամակալի անունը _____

Մտողի (խնամակալի) ստորագրությունը _____ Ամսաթիվ _____